ղեցին մէկ պայմանով սակայն, եկեղեցիին դուռները և պատուհանները քարով կը փակեմ և ներսը նշան մը կը դնեմ ու կը կնքեմ. մինչև որ Դամասկոսէն վերադառնամ և դրած նշանս նոյնը գտնեմ, այն ատեն միայն Մար Եղուպ եկեղեցին ձեզի կուտամ։ Եւ ըսածին պէս ալ ըրաւ, ու գնաց վառ թողլով աւագ խորանին կանթեղը, առանց մէկու մը բան մը ըսելու։ Իսկ մերինները անճար մնալով եկեղեցիին գաւիթին մէջ՝ պատին վրայ Ս. Գէորգի անունով պատուհան մը շինեցին և հոն կ'աղօթէին և Ս. պատարագ կը մատուցանէին։ Եօթը տարի յետոյ Սալաէտտին վերադարձաւ ու անոր յիշեցուցին եկեղեցին բանալու իր խոստումը։ Սուլթանը բանալով եկեղեցիին դուռը՝ տեսաւ որ աւագ խորանին կանթեղը տակաւին կը վառէր ու վրան ալ սարդի ոստայն չրջապատած էր։ Այն ատեն Սալաէտտին եկեղեցին Հայոց պարգեւեց ըսելով որ առանց Աստուծոյ կամքին չէ որ եկեղեցին Հայոց ձեռքը կը մնայ։ Ս. Յակոբեանց վանքը Հայոց սեպհականութիւն դարձնելով՝ վանքին արտաքին դրան վրայ գրեց արաբերէն անէծք մը, իրենց օրէնքին համաձայն, թէ «Մի ոք առցէ զսա ի ձեռաց Հայոց, և կայ մինչև ցայսօր ժամանակի(*) (Հան. էջ 287–289)։

Զուար Ճիյէրմի օղլու քահանան 1711–12ին, իր ճանապարհորդութեան մէջ կը յիշատակէ հետեւեալ աւանդութիւնը. «...Եւ միւս կողմն կոչնակին՝ սի-

(*) Այս արաբերէն արձանագրութիւնը որ միւնչեւ հիմակ գոյութիւն ունի Ս. Յակոբի արտաքին դրան վրայ, Սալաէտտինը չէ որ գրեել տուած է, այլ Եգիպտոսի Սուլթան Մէլիք Զահիր Զախմախ (1438–1453), Երուսաղէմի Հայոց պատրիարք՝ Մարտիրոս Եգիպտացիին օրով (**Մ. Ա. Ե.** էջ 267)։